ԱՐՄԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է եզրահանգում, որ հայ-ռուսական հարաբերությունները կրում են ռազմավարական բնույթ և կարևորվում են Հայաստանի ու Ռուսաստանի անվտանգության համար ունեցած իրենց ընդգծված դերով ու նշանակությամբ: Հայ-ռուսական ռազմավարական համագործակցության ուղղությամբ ստեղծված իրավապայմանագրային դաշտի ու անցկացված միջոցառումների համալիր վերլուծությունը հավաստում է, որ այդ գործակցությունը հիմնվել է և շարունակում է արդյունավետորեն զարգանալ բոլոր ուղղություններով:

Հիմնաբառեր- *Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, տարածաշրջան, անվտանգություն, գործընկերություն, բազմակողմ համագործակցություն, արտաքին ազդեցություն, զինված ուժեր:*

Հայ-ռուսական հարաբերություններն ունեն դարերի պատմություն՝ պայմանավորված երկու երկրների պատմական զարգացումով, միջպետական կապերի առկայությամբ և այլ գործոններով: Ժամանակի ընթացքում առավել սերտ հարաբերությունները շարունակվում են նաև ներկա օրերում՝ ինչպես պետական բազմակողմանի համագործակցության մակարդակով, այնպես էլ հայ և ռուս ժողովուրդների միջև բարեկամական առնչությունների միջոցով:

1991թ. դեկտեմբերին կնքելով Բելովեժյան համաձայնությունը՝ Խորհրդային Միությունը դադարեցրեց իր գոյությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, որին հաջորդեց Անկախ Պետությունների Համագործակցության հռչակումը՝ նպատակ հետապնդելով որոշակի միասնականություն պահպանել նախկին խորհրդային հանրապետությունների միջև[1]: Իրադրությունը բավական բարդ էր երկրների, մասնավորապես՝ Հայաստանի ու Ռուսաստանի միջև հարաբերություններ կառուցելու առումով: Անդրկովկասը միանգամից դարձավ միջէթնիկ, տարածքային և սոցիալ-տնտեսական հակամարտությունների թատերաբեմ: Դա պայմանավորված էր մի շարք գործոններով: Նախ և առաջ, խորհրդային և հետխորհրդային օրակարգային ժամանակաշրջաններում ստեղծված վեճերն ու հակամարտությունները դարձան տարածքային ամբողջականության և ազգային ինքնագիտակցության խնդիրների պատճառով խիստ սրվեցին: Հարավկովկասյան երեք համեմատաբար փոքր տարածք ունեցող հանրապետություններում բնակվում են երկու տասնյակից ավելի ազգային և էթնիկական միավորներ, ինչն արդեն պարարտ հող է լարվածության ու հակամարտությունների առաջացման կամ վերսկսման համար: Բացի այդ, կտրուկ վատթարացավ տարածաշրջանի բնակչության տնտեսական դրությունը, ինչը պայմանավորված էր նաև ներքաղաքական կոնֆլիկտներով: Արդյունաբերությունը կրճատեցին մի քանի անգամ, աշխատանքի հնարավորություններից զրկված երիտասարդությունը սկսեց հարել ծայրահեղական հոսանքներին: Իրավիճակն ավելի էր բարդանում կազմակերպված հանցագործության պատճառով: Երկար ժամանակ չպահպանվող դյուրանցանելի արտաքին սահմանները նպաստավոր պայմաններ էին ստեղծում թմրանյութերի տարածման, մարդկանց, ինչպես նաև՝ զենքի անօրինական վաճառքի համար:

Հարկ է նշել, որ հարավկովկասյան պետությունների համագործակցության վրա ազդում են ոչ միայն ներտարածաշրջանային գործընթացները, այլ նաև մյուս երկրների, մասնավորապես՝ հարավային հարևանների Իրանի և Թուրքիայի հետ հարաբերությունները, ինչպես նաև՝ ԱՊՀ շրջանակից դուրս յուրաքանչյուրի առանձին գործակցությունը Ռուսաստանի հետ: Դա հիմնավորվում է նաև նրանով, որ տարածաշրջանի աշխարհաքաղաքական համալիրում ազգային անվտանգությունից ու սահմանների ամբողջությունից հետո երկրորդ կարևորագույն բաղադրիչը աշխարհատնտեսությունն է: Հարավային Կովկասը բնական այնպիսի արժեքավոր ռեսուրսների շտեմարան է, ինչպիսիք են՝ ածխաջրային հումքը, ուրանը, բամբակը և այլն: Այս ապրանքների արտահանման առումով ամենահարմարը ռուսական շուկան էր, հատկապես՝ դեռ խորհրդային ժամանակաշրջանից ձևավորված առևտրատնտեսական կապերի առկայության շնորհիվ: Ռուսաստանն իքն էլ էր շա-

www.journal.lawinstitute.am

հագրգռված այդ կապերի զարգացմամբ, քանի որ Խորհրդային Միությունում արտադրությունը կազմակերպված էր այնպես, որ միութենական ոչ մի հանրապետություն դուրս չէր մնում արտադրական գործընթացից: Այսինքն, հումքը ձեռք էր բերվում խորհրդային մի հանրապետությունից, մասերը ավելացնում էին մյուսում, իսկ վերջնական արտադրանքը պատրաստվում էր մեկ ուրիշ հանրապետությունում:

Հայ-ռուսական համագործակցության առումով կարելի է նշել, որ Ռուսաստանն այդ պահին կանգնած էր պատմական ընտրության առաջ, ինչը մի քանի տասնամյակներով կկանխորոշեր նրա զարգացումը: Հայաստանն ուշքի չէր գալիս 1988թ. ավերիչ երկրաշարժից, երկրում ծագել էր տնտեսական և սոցիալական ճգնաժամ: Գրեթե միաժամանակ ծագած վրաց-աբխազական և ղարաբաղյան հակամարտությունները Հայաստանի առջև փակել էին կենսական նշանակություն ունեցող առևտրական ուղիները: Շուրջ 60%-ի հասած գործազրկությունը դառնում է այն պատճառներից մեկը, որ սկսվում է «մեծ արտագաղթը»[2]:

Այդ ժամանակաշրջանում էլ սկսվում է հակամարտ երկխոսություն Հայաստանի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի սահմանների վերանայման հարց, որը վերաճում է լայնամասշտաբ ռազմական գործողությունների: Կանոնավոր և լավ զինված բանակի բացակայության պայմաններում Հայաստանը փաստացիորեն անօգնական էր դարձել Ադրբեջանի հարձակումների դեմ, որն ստացել էր Անդրկովկասյան ռազմական օկրուգի՝ իր տարածքում գտնվող 4-րդ բանակի սպառազինության մեծ մասը, իսկ Ռուսաստանի ռազմական ներկայությունն իր երկրում 1992թ. ընթացքում սահմանափակել էր Գաբալայի հակահրթիռային ռադիոկողմնորոշիչ կայանի անձնակազմով[3]: Հարկ է նկատել, որ ԽՍՀՄ-ի փլուզման ժամանակաշրջնում Ռուսաստանին ամենաքիչն էին հետաքրքրում Հարավային Կովկասում իր ռազմական ներկայության և արդեն անկախ պետությունների միջև նախկին Խորհրդային բանակի սպառազինության քվոտավորման հարցերը: Դրանից շտապեց օգտվել Ադրբեջանը, որն այդ սպառազինությունը ստացավ ԱՊՀ-ին անդամակցելու դիմաց: Չնայած թշնամու բացարձակ գերակշռությանը՝ հայկական ինքնաբուխ կազմավորված ջոկատները և հետագայում արդեն կանոնավոր զինված ուժերը փոխեցին ղարաբաղյան հակամարտության պատերազմական փուլի ողջ ընթացքը՝ ազատագրելով Հայաստանն ու Արցախը ցամաքային ուղով կապող Լաչինը և Շուշին: 1994թ. մայիսի 16-ին Հայաստանի, Ղարաբաղի և Ադրբեջանի պաշտպանության նախարարները Մոսկվայում ստորագրեցին պատերազմական գործողությունները դադարեցնելու և հրադադարի հաստատման մասին համաձայնագիր[4]:

Չնայած բոլոր դժվարություններին Հայաստանին հաջողվեց իրագործել մտադրված կառուցվածքային բոլոր փոփոխությունները՝ ազատականացնել և բարեփոխել տնտեսությունը ու սոցիալական համակարգը: Սկզբնական շրջանում Հայաստանը փորձեց ոտքի կանգնել առանց Ռուսաստանի մասնակցության. հայկական իշխանությունները ձգտում էին երկրի աշխարհագրական դիրքն օգտագործելով՝ այն վերածել երկրորդ Շվեյցարիայի՝ կայուն ու ծաղկուն պետության: Սակայն սպասելիքները չարդարացան, և ի հայտ եկան երկրաչափական պրոգրեսիայով աճող տարաձայնություններ՝ երկրի հետագա սոցիալ-տնտեսական զարգացման և արտաքին քաղաքականության հետագա կուրսի վերաբերյալ, ինչը ստիպեց հանրապետության ղեկավարությանը մտածել Ռուսաստանի հետ համագործակցության անհրաժեշտության մասին[5]:

Տարածքային և ռեսուրսային առումներով սահմանափակ հնարավորություններ ունեցող Հայաստանը Խորհրդային Միության փլուզումից հետո ընկած ժամանակահատվածում արտաքին քաղաքականության կողմնորոշման այդքան էլ լայն ընտրության իրավունք չուներ, մանավանդ, որ երկիրը գտնվում է մեծ տերությունների ռազմաքաղաքական և տնտեսական շահերի խաչաձևման ոլորտում: ՀՀ նախկին նախագահ Ռ. Քոչարյանը նշում է, որ այդ առումով կարող են լինել արտաքին հարաբերություններում վարքի երկու տարբերակ.

1. Մեծ տերությունների աշխարհաքաղաքական տարաձայնությունների շահարկում՝ դրանից առավելագույնս օգուտ ստանալու նպատակով,

2. Օգուտ ստանալու փնտրտուքներ, սակայն ոչ թե մեծ տերությունների միջև տարաձայնություններն օգտագործելով, այլ դրանք հարթելու ճանապարհով՝ առաջին պլան մղելով քաղաքական և տնտեսական հեռավոր նպատակահարմարությունը[6]:

Իհարկե, Հայաստանն ընտրեց երկրորդ տարբերակը: Երկրի արտաքին գերատեսչությունը սկսեց առաջնորդվել կոմպլեմենտարության սկզբունքով, և դա, ինչպես կարծում է հայտնի դիվանագետ, 1992-1994թթ. ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Վլ. Ստուպիշինը, «...յուրաքանչյուր զուգահեռվող և կողմնորոշված գործողություն արտաքին քաղաքականության ընդունելի մեթոդ է, և չկա դրան անպայման այլընտրանք փնտրելու անհրաժեշտություն»[7]: Արտաքին քաղաքականության համատեքստում կոմպլեմենտարիզմի[8] սկզբունքը նշանակում է այդ քաղաքականության

www.journal.lawinstitute.am

տարբեր հայեցակետերի փոխլրացվածություն, այսինքն, դրա հիմքում ընկած հեռանկարները պետք է հավասարակշռեն միմյանց և լրացվեն երկրորդական, երրորդական կամ այլ նշանակության անհրաժեշտ ու հնարավոր հայեցակարգերով՝ արդյունավետ արտաքին քաղաքականություն վարելու համար: Կոմպլեմենտարության քաղաքականությունը ենթադրում է առավել սերտ կապերի հաստատում առանձին պետությունների հետ: Փոխլրացման սկզբունքը հետագայում ամրագրվեց նաև Հայաստանի անվտանգությանը վերաբերող հիմնական փաստաթղթերում, օրինակ, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում՝ որպես արտաքին անվտանգության ռազմավարության իրականացման գլխավոր սկզբունք[9]:

Հարավային Կովկասում ծավալվող անվտանգության և ռազմաքաղաքական գործընթացների ազդեցությունը ժամանակի ընթացքում ընդլայնվում է, ինչի հետևանքով տարածաշրջանում ակտիվանում է տարբեր արտաքին ուժերի, գերտերությունների և անվտանգության համակարգերի գործունեությունը[10]: Դեռևս Ռ. Քոչարյանն իր նախընտրական ծրագրում Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական և տնտեսական համագործակցությունն առանձնացրել էր առանձին կետով, իսկ ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ համագործակցությունը՝ մեկ այլ կետով: Բացի այդ, Ռուսաստանի հետ փոխգործակցության կետը նախորդում էր Արևմուտքի հետ համագործակցելու բաժնին, ինչը ևս մեկ անգամ վկայում էր հայ-ռուսական հարաբերությունների առաջնայնությունը մյուսների նկատմամբ:

Հայաստանի արտաքին քաղաքականությունը, անկասկած, հենվում է նրա աշխարհաքաղաքական կարգավիճակի, ազգային շահերի և միջազգային հարաբերությունների առաջընթացի վրա, սակայն այս հարցում դիտարկելի է մի էական, տրամաբանական պարզաբանման ենթակա նրբություն: Դա, հայ էթնոսի ազգային ինքնագիտակցությունն է: Արտաքին քաղաքականությունը, որպես ֆենոմեն, ներառում է ոչ միայն «աշխարհաքաղաքականություն», «ազգային անվտանգություն», «աշխարհատնտեսություն» և նման գաղափարներ, այլ նաև աշխարհի յուրատեսակ այն ենթապատկերը, որը ստացվում է աշխարհաքաղաքական ընդգծված հատվածին վերաբերող որոշումների հետևանքով: Լայն առումով, դա միջազգային հանրության, իսկ նեղ առումով՝ միջազգային քաղաքականության կերպարն է, որը ձևավորվում է միջազգային քաղաքականության սուբյեկտների հետ դրական կամ բացասական շփման և սոցիալական գիտակցության օրինաչափ զարգացման հիմքի վրա[11]:

Հայ ժողովուրդը, այսպես կոչված «ամուր էթնոսի» վառ օրինակ[12]: «Ամուր էթնոսը» ժողովուրդ է, ազգ կամ ազգություն, որը, երկար ժամանակ գոյատևելով օտար լծի տակ, պահպանել է իր ազգային առանձնահատկությունները և ինքնագիտակցությունը: Որոշակի գործոնների առկայությունը Հայոց պատմության մեջ (Հայկական հարցի առաջացում, հայության ձգտումը պետականության վերականգնման ուղղությամբ, Ռուսական կայսրության փլուզումը Հայկական ԽՍՀ-ի ձևավորումը և այլն) նույնպես պայմանավորում է ժամանակակից Հայաստանի արտաքին քաղաքականության կուրսը դեպի Ռուսաստան, դրա բնույթն ու ծավալները:

Վերջին հարյուրամյակների հայ-ռուսական հարաբերությունների համառոտ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Ռուսաստանն իսկապես ցուցաբերել և հիմա էլ հսկայական օգնություն է ցուցաբերում Հայաստանին, գործուն կերպով մասնակցում է Հայաստանի և հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքիմ: Հայերը, իրենց հերթին փոխադարձ վերաբերմունք են դրսևորում ռուսների սահմաններում «բարուն բարով» պատասխանելով: Ինչպես գրում է ռուս պատմաբանը՝ «Թուրքական Հայաստանում ռուսները պատերազմում էին (1878-1879թթ.) կարծես սեփական հողի վրա՝ շնորհիվ հայ ժողովրդի…»[13]:

Հայաստանի և Ռուսաստանի, որպես անկախ պետությունների միջև համագործակցությունը սկսվել է 1991թ. դեկտեմբերի 29-ին՝ «Բարեկամության, գործընկերության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի» կնքումով, միջազգային երկխոսության առումով դժվարին պայմաններում, քանի որ Խորհրդային Միության փլուզումից հետո իրավական վակուումում հայտնվել էին ոչ միայն Ռուսաստանը և Հայաստանը, այլ նաև միութենական մյուս հանրապետությունները: 1991թ. պայմանագիրը ոչ միայն սահմանեց երկկողմանի հարաբերությունների հիմքը, այլև որոշեց դրանց հետագա ուղղությունները և բնույթը: Տարածաշրջանում սրվող հակամարտությունների պայմաններում պայամանագիրը պարունակում էր մի շարք դրույթներ, որոնք միջազգային իրավական դաշտի ձևավորման համար խիստ անհրաժեշտ էին: Մասնավորապես, 3-րդ հոդվածում ասվում է «Այնպիսի իրավիճակի ստեղծումը, որը, կողմերից մեկի կարծիքով, խաղաղությանը, կամ իր հիմնական շահերի համար սպառնալիք է դառնում, այդ Կողմը կարող է դիմել մյուս Կողմին՝ անհետաձգելի օգնության խնդրանքով, որի տեսակները և չափերը կորոշվեն համապատասխան խորհրդակցությունների միջոցով»[14]:

Սակայն պայմանագրի վավերացումը երկու

երկրների օրենսդիր մարմիններում հանդիպեց որոշ խոչընդոտների: Հայաստանի խորհրդարանի պատգամավորների մի մասը Ռուսաստանի՝ դարաբաղյան հակամարտության կարգավորման գործում Ադրբեջանին թեպետ ոչ պաշտոնապես, օգնելու պատճառով դեմ էին պայմանագրին: Նրանք դժգոհում էին նաև դրա որոշ հոդվածների ռազմական բնույթից: ՌԴ Դերագույն խորհրդում պատգամավորների մի մասը հրաժարվում էր այն վավերացնել՝ պատճառաբանելով, որ անհրաժեշտ է նմանատիպ պայմանագիր կնքել նաև Ադրբեջանի հետ:

Հայաստանի տարածքում տեղակայված նախկին ԽՍՀՄ ԶՈՒ Անդրկովկասյան ռազմական օկրուգի 7-րդ գվարդիական բանակի հարցը վավերացման ընթացքում ամենաքննարկվող ու սուր խնդիրներից էր: Այն օրակարգային էր ԱՊՀ բոլոր երկրների համար, քանի որ նորաստեղծ Անկախ Պետությունների Համագործակցության անդամների համար հավաքական զինված ուժեր ստեղծելու գործընթացին զուգահեռ նաև առանձին հանրապետություններում ազգային բանակների ստեղծման փորձեր էին արվում: Արդեն 1992 թ-ի գարնանը պարզ դարձավ, որ նախկին խորհրդային տարածքի երկրները միասնական վերահսկողության տակ պահելն անհնար է: Նախ, սրվեցին հարաբերությունները ԱՊՀ որոշ երկրների միջև, զինված ուժերի ղեկավարման համար միասնական գործունյա ուժը չկար: Բացի այդ, Մոսկվան, ինչպես և սպասվում էր, իր վրա վերցրեց ստեղծվելիք ռազմական միության կազմակերպման ու ղեկավարման գերիշխող դերը, ինչը, բնականաբար, դուր չեկավ ԱՊՀ որոշ երկրների: Ձախողված նախաձեռնությունը, հանգեցրեց նախկին միութենական հանրապետությունների միջև Խորհրդային բանակի ունեցվածքի, սպառազինության բաշխման ու ազգայնացման գործընթացին[15]:

Այնուամենայնիվ, ակնհայտ էր, որ անհրաժեշտ էր ստեղծել տարածաշրջանային անվտանգության նոր արդյունավետ համակարգ՝ ռազմաքաղաքական այնպիսի կառույց, որը նվազագույնի կհասցներ տնտեսական, ռազմական, տեխնիկական ծախսերը և կհանգեցներ զինված հակամարտությունների լարվածության վերացմանը հետխորհրդային տարածքում: Ուստի հաշվի առնելով այս և բազմաթիվ այլ գործոններ՝ 1992թ. մայիսի 15-ին Տաշքենդում Հայաստանի, Ռուսատանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի միջև կնքվեց Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը, որը ՄԱԿ-ի կանոնադրության 52-րդ հոդվածին համապատասխան՝ դարձավ տարածաշրջանային անվտանգության կազմակերպման օրինակ:

Պետք է նկատել, որ այս պայմանագրով սկիզբ դրվեց ոչ միայն հայ-ռուսական երկկողմ փոխհարաբերություններին, այլև բազմակողմ ձևաչափով: Այն ռազմավարական զսպման հնարավորություն տվեց Թուրքիայի առումով՝ արցախյան հակամարտության մեջ Թուրքիայի ներգրավվածության ռիսկը նվազեցնելու դիտակետից: Նշյալ համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ եթե համաձայնագիրը ստորագրած որևէ պետություն՝ մասնակից որևէ այլ պետության կամ պետությունների խմբի կողմից ենթարկվի ոտնձգության, ապա այն կդիտարկվի՝ որպես վերոնշյալ համաձայնագրի բոլոր մասնակից պետությունների հանդեպ ոտնձգություն[16]:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետությունն իր զարգացման սկզբնական փուլում ազգային անվտանգության խնդիրները կապում էր Ռուսաստանի կողմից ստեղծված հավաքական անվտանգության խնդիրների հետ[17]: Իր հերթին, Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը բերեց 1992թ. օգոստոսին մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր փաստաթղթի ստորագրմանը, որը վերաբերում էր ՀՀ տարածքում Ռուսաստանի զինված ուժերի իրավական կարգավիճակին: Փաստաթղթում, Հայաստանի տարածքում տեղակայված նախկին խորհրդային զինված ուժերի զորամասը հանձնվեց Ռուսաստանի Դաշնությանը: Երեք տարի անց կնքվեց Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական ռազմակայանի մասին պայմանագիրը: Դրանում ասվում է, որ ռուսական ռազմակայանը Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ողջ ընթացքում, շահերը պաշտպանելու գործառույթից բացի, ՀՀ զինված ուժերի հետ համատեղ ապահովում է նաև Հայաստանի անվտանգությունը Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միության նախկին սահմանի ողջ երկայնքով:

Հարկ է նշել, որ ԱՊՀ երկրների շրջանակներում ռազմա-քաղաքական համագործակցության առումով կարևորվում է 1994 թ. հոկտեմբերի 21-ին Հայաստանի աջակցությունը «ԱՊՀ պետությունների՝ ինտեգրման զարգացման հիմնական ուղղությունները» հուշագրի համագործակցությանը, որը նախատեսում էր ռազմական ոլորտում ինտեգրացիա:

1995թ. փետրվարի 10-ին Ալմա-Աթայում ԱՊՀ պետությունների միջև հայեցակարգ է ընդունվում՝ «Հավաքական անվտանգության մասին համաձայնագրի մասնակից պետությունների հավաքական անվտանգության մասին հայացեկարգ»: Հայաստանը միանում է, և 1995 թ. նոյեմբերին Ռուսաստանի դաշնության խորհրդարանը վավերացնում է այդ համաձայնագիրը[18]:

www.journal.lawinstitute.am

Այսպիսով՝ հայ-ռուսական հարաբերությունները Հայաստանի համար կարևորվել են աշխարհաքաղաքական տեսանկյունից, քանի որ Ռուսաստանը տարածաշրջանային դերակատարություն ունեցող պետություն է և դարավոր ավանդույթներ ունենալով Հարավային Կովկասում, միաժամանակ ներազդեցության լայն լծակներ և գործունեության մեծ հնարավորություններ ունի միջազգային հարաբերություններում: Վերլուծվող շրջանի զարգացումների ընթացքը շատ հստակ ցույց տվեց այդ տարածաշրջանի կարևորությունը և կանխորոշեց Ռուսաստանի ուշադրության մակարդակն ու մասնակցությունը այս տարածաշրջանի կյանքում: Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական զարգացումները նպաստում էին ընդլայնել հայ-ռուսական սերտ սոցիալ-մշակութային կապերն ու արդյունավետ տնտեսական համագործակցությունը, որը, իհարկե, ընդգրկում էր նաև Ռուսաստանի Դաշնության կենսական շահերը Հարավային Կովկասի տարածաշրջանում:

[1] Լրացուցիչ տե՛ս, СНГ: история, участники, цели и задачи, http://ria.ru/infografika/20140818/1020196217.html

[2] Корнилов А.А. Геополитика современных российско-армянских отношений и ее влияние на проект “Новый Великий Шелковый Путь”. http://nashasreda.ru/geopolitika-sovremennyx-rossijsko-armyanskix-otnoshenij-i-ee-vliyanie-na-proekt-novyj-velikij-shelkovyj-put/

[3] Третьяков А.С. Вооруженные силы РФ в Республике Армения: некоторые правовые аспекты пребывания // Право и безопасность. 2003. N 2. Июнь.

[4] Քոչարյան Տ.Տ. Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 193:

[5] Гаджиев К.С. Геополитика Кавказа. М., 2001, С. 29.

[6] ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ելույթը ՌԴ ԱԳՆ դիվանագիտության ակադեմիայում, 16.01.2003թ., (Հայաստանի Հանրապետություն օրաթերթ), 17.01.2003թ., էջ 5:

[7] Ступишин В. “Концепция комплементарности во внешней политике Армении” // Ноев Ковчег. - 2001. Март.

[8] Ռուսերեն՝ «комплемент», լատիներեն՝ «complementum» - կոմպլեմենտար, նշանակում է լրացում, փոխլրացում: Ռուսերեն՝ “комплементарный” и “комплементарность” означают: дополнение, дополнительность, добавочность. Новейший словарь иностранных слов и выражений. М., 2002, С. 419.

[9] Տե՛ս, ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007:

[10] Քոթանջյան Հ.Ս. Հայաստանը և միջազգային հանրությունը // Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 684-685:

[11] Задохин А.Г. Внешняя политика России: национальное сознание и национальные интересы. М., ДА МИД России, 2002. С. 10.

[12] Smith A.D., National Identity. London, 1991. P. 26.

[13] Лурье С.В. Образы армянской политической мифологии. М., Институт Африки РАН. 2000. С. 38.

[14] Корнилов А.А. Геополитика современных российско-армянских отношений и ее влияние на проект “Новый Великий Шелковый Путь”. http://nashasreda.ru/geopolitika-sovremennyx-rossijsko-armyanskix-otnoshenij-i-ee-vliyanie-na-proekt-novyj-velikij-shelkovyj-put/

[15] Ивашов Л.Г., Булыгин А.Н. Коллективная безопасность в рамках Содружества Независимых Государств: состояние и перспективы обеспечения // Военная мысль. – 1998, с. 8-10.

[16] Այս մասին առավել մանրամասն տե՛ս, Договор о коллективной безопасности от 15 мая 1992 года (Организация Договора о коллективной безопасности: համացանցային կայքէջ՝ URL: http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=126 (03.03.2015)):

[17] Минасян С.М. Процесс формирования системы коллективной безопасности в рамках СНГ: история и перспективы // Вестник Армяно-российского университета. 2003. С. 46-53.

[18] Առավել մանրամասն տե՛ս, О подготовке договора о коллективной безопасности см.: ГАРФ. Ф. 10026. Оп. 4. Д. 3323–3324. “Документы об участии Комитета по обороне и безопасности в подготовке Договора о коллективной безопасности (“Договор об оборонительном союзе СНГ”), 1991 г.”

Армен Агабабян
Аспирант института философии, социологии и права
Национальной Академии Наук Республики Армения

РЕЗЮМЕ

Формирование и развитие армяно-российских отношений в постсоветский период

В статье делается вывод, что армяно-российские отношения имеют стратегический характер и выделяются своей ролью и значимостью в системах безопасности Армении и России. Комплексный анализ созданных правовых документов и проведенных мероприятий по закреплению армяно-российского стратегического партнерства подтверждает, что это сотрудничество было основано и продолжает успешно развиваться по всем направлениям.

Ключевые слова: *Республика Армения, Российская Федерация, регион, безопасность, партнерство, многостороннее сотрудничество, внешнее влияние, вооруженные силы.*

Armen Aghababyan
PhD student at the Philosophy, Sociology and Law Institute of the
National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY

The formation and development of the Armenian-Russian relations in post-Soviet period.

The article concludes that the Armenian-Russian relations has a strategic nature and wich is important for Armenia's and Russia's security with their emphasized role and importance. Comprehensive analysis of established legal instruments and undertaken measures to consolidate the Armenian-Russian strategic partnership confirms that this cooperation was established and continues to develop successfully in all fields.

Keywords: *Republic of Armenia, Russian Federation, region, security, partnership, multilateral cooperation, external influence, armed forces.*